HSBC

ԵՐԱՇԽԻՔ GTEMYT240085

Թողարկման ամսաթիվ 18 հուլիսի 2024 թ.

1.Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարան-ի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/220 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին Մուրան ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) Բենեֆիցիարին վճարել 1 700 000,00 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջը ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է Բենեֆիցիարի կողմից ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/220 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Պրինցիպալի կողմից հայտը ներկայացնելու օրվանից հաշված մեկ հարյուր քսան աշխատանքային օր բայց ոչ ուշ քան 10 փետրվարի 2025 թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից (tradeandsupplychain.armenia@hsbc.com) ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (irina.eghiazaryan@yerevan.am):

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության մասին պատճենը, որտեղ նշվում է խախտումը և երաշխիքը:

HSBC

ԵՐԱՇԽԻՔ GTEMYT240085

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1)պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10.Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11.Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ անունից

Հարգանքով՝

Արտակ Պետրոսյան
Առևտրի Ֆինանսավորման
Վարչության Ղեկավար

Կամո Մարգարյան
Կորպորատիվ Բիզնեսի
Գծով Տնօրեն

Կատարող՝ Տաթևիկ Դանիելյան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0015, Պարոնյան 42, տարածք 90
Հեռ.՝ +374 60 655 000 Ֆաքս՝ +374 60 655 501 Կայք՝ www.hsbc.am
Գրանցված է Հայաստանի Հանրապետությունում
Գրանցման համար 67

"HSBC Bank Armenia" CJSC
90 Area, 42 Paronyan Street, Yerevan, 0015, RA
Tel: +374 60 655 000 Fax: +374 60 655 501 Web: www.hsbc.am
Registered in the Republic of Armenia
Registered number 67